

**Երվանդ ՎԱՐԴԱՎՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

**Զ. Գ. ԲԱՅՐՈՆԻ «ԴՈՆ ԺՈՒԱՆ» ՊՈԵՄԻ ԼԵԶՎԱՌԱՎԿԱՆ  
ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ**

Ինչպես Բայրոնի պոեզիայում, ընդհանրապես, «Դոն Ժուանում», ևս, կան բազմաթիվ հունա-հռոմեական միֆոլոգեմներ և աստվածաշնչյան սակրալ-արքետիպային հասկացություններ, որոնք «դատարկված» առասպելական սյուժեներից և օժուլած սիմվոլիկ գործառույթներով, ի վերջո դարձել են որոշակի լեզվառծական միջոցներ: Այս առնչությամբ, հոդվածում ներկայացվում է «այլուղիս-մեջքերում» հասկացությունը՝ որպես «Դոն Ժուան» պոեմին բնորոշ կարևորագույն լեզվառծական միջոց: Բազմաթիվ օրինակներով, հոդվածում քննարկվում են այդ դեպքերը՝ հասուն ուշադրություն դարձնելով հայերեն բարգմանության համարժեքությանը: Ոչ համարժեք բարգմանության դեպքում հաճախ առաջարկվում է սեփական տարրերակը:

**Բանալի բառեր.** լեզվաշերտ, լեզվառծական, միֆոլոգեմ, արքետիպ, սակրալ-արքետիպային, գործառույթ, խորհրդանշ, փոխակերպում, ծևափոխություն, այլուղիս, մեջքերում

Զ.Գ. Բայրոնի «Դոն Ժուան» պոեմը<sup>1</sup> կամ չափածո վեպը (ցավոք, անավարտ), իր թեմատիկ-բովանդակային ընդգրկմամբ և լեզվառծական ու լեզվաարտահայտչական միջոցների բազմազանությամբ, աննախադեպ երևույթ է համաշխարհային գրականության մեջ: Այս գործում, որը բաղկացած է ութիսակներով (օկտավ)<sup>2</sup> գրված 16 նվազից (17-րդը մնացել է անավարտ), մեծ թիվ են կազմում գրական ուղղությունների (մասնավորապես, «Լճային դպրոցի») և գրողների անունների, հունա-հռոմեական առասպելական սյուժեների և միֆոլոգեմային անունների, իին հունական շրջանի բանաստեղծների ու նրանց գործերի, պետական-քաղաքական գործիչների, փիլիսոփաների, փիլիսոփայական տարրեր ուղղությունների, մշակութային-գրահրատարակչական կյանքի առանձին ներկայացուցիչների, II-IV դր. քրիստոնյա և հայրերի և աստվածական սյունավագիների, ուղղությունների ու կերպարների, անգլիական, ֆրանսիական, իսպանական, ռուսական, թուրքական և այլն, քաղաքական ու մշակութային դեմքերի, դեպքերի ու երևույթների հիշատակումներ: Պոեմում կամ բազմաթիվ այլուղիսներ, մեջքերումներ, թևավոր խոսքեր, դարձվածքներ, եվրոպական, մասնավորապես, անգլիական իրականության տարրեր բնագավառներին առնչվող իրակություններ (ռեալիս) և այլն: Միուլ բանիվ, Բայրոնի «Դոն Ժուան» պոեմը յուրատեսակ չափածո հանրագիտարան է, համաշխարհային քաղաքական, իրավաբանական, փիլիսոփայական, կրոնադասվանական, բարոյաբանական, գեղագիտական, մշակութաբանական, սոցիոլոգիական, հոգեբանական մտքի հորդահու գետ:

«Դոն Ժուան» պոեմի լեզվառծական առանձնահատկությունները վերլուծելիս, որպես հոդվածի հիմնական թեմատիկ առանցք, ուսումնասիրել ենք հունա-հռոմեական (միֆոլոգեմային) ուստվածաշնչյան (սակրալ-արքետիպային) լեզվաշերտերը և դրանց հայերեն բարգմանությունը:

Ինչպես Բայրոնի պոեզիայում, ընդհանրապես, «Դոն Ժուանում», ևս, կան բազմաթիվ հունա-հռոմեական միֆոլոգեմներ, որոնք, սակայն, «դատարկված» առասպելական սյուժեներից և օժուլած սիմվոլիկ գործառույթով, ի վերջո, լեզ-

վառճական որոշակի միավոր են դարձել: Այսպես, «Դոն Շուան» պոեմի հետևյալ ութնյակում.

And if I laugh at any mortal thing,  
‘T is that I may not weep; and if I weep,  
‘T is that our nature cannot always bring  
Itself to apathy, for we must steep  
Our hearts first in the depths of Lethe’s spring,  
Ere what we least wish to behold will sleep:  
Thetis baptized her mortal son in Styx;  
A mortal mother would on Lethe fix.

(“Don Juan”, IV-IV)

Ով անսիրտ մարդիկ, ծիծաղում եմ ես,  
Որ դուք չտեսնեք արցունքս երբեք,  
Ես հառաջում եմ ահեղ հողմի պես,  
Քանզի սիրտ ունեմ խենք ու վշտարեկ:  
Ով վիշտն է ուզում մոռանալ հավերժ,  
Թող գնա դեպի Լեռան խստամբեր,  
Թեղիսն Ստիրոսն կնքեց իր որդուն,  
Բայց ինձ Լեռան է հիմա կախարդում:

(«Դոն Շուան», IV-4 (ընդգծումը մերս է՝ Ե.Վ.)

Մոռացության «Լեռա» գետը, Ներեռուիհի«Թեղիսը» (Թետիս), ստորերկրյա «Ստիգմ» (Ստիրս) գետը, որպես ավանդական միֆոլոգեմներ, վերստին ունեն խորհրդանշանային արժեք, ուստի կարելի է խոսել 1.ա) Լեռայի՝ որպես մոռացության գետի (միֆոլոգեմ), թէ Լեռայի՝ որպես լեզվանական միջոցի (խորհրդանշի) 2.ա) Ստիրսի՝ որպես անխոցելի դարձնող ստորերկրյա գետի (միֆոլոգեմ), թէ նույն Ստիրսի՝ որպես լեզվանական միջոցի կամ անխոցելիության խորհրդանշի մասին: Լեռա(ա)-Լեռա(թ), Ստիրս (ա)-Ստիրս(թ) զույգերի միջև ընկած է պատմամշակութային զգալի ժամանակահատված, որի ընթացքում նշյալ միֆոլոգեմները ձեռք են բերել զեղագիտական-խորհրդանշանային արժեք՝ ժամանակին ձևականորեն զիտակցվելով որպես միֆոլոգեմ: Այստեղից հետևում է, որ այս բառ-միֆոլոգեմները, ժամանակի ընթացքում ձևականորեն մնալով և ընկալվելով որպես միֆոլոգեմներ, նոր ժամանակներին հատուկ հասարակական ու անհատական զիտակցության մեջ, «զրկվելով» իրենց վաղնջական-միֆոլոգեմային բովանդակությունից ու գործառութիզ, վերածվել են պարզապես բառերի ու բառակապակցությունների, իսկ լեզվանական մակարդակում՝ պատկերավորման միջոցների, և, ուրեմն, սկսել են դիտարկել ոչ այնքան իրենց առապելաբանական նշանակությամբ, որքան խորհրդանշանային-զեղագիտական իմաստառումով ու արժեքով:

Թեև շատ ութնյակներում հանդիպում ենք հունա-հռոմեական բազմաթիվ միֆոլոգեմներ (մուսա, Պեգաս, Օլիմպոս, Ֆորտունա և այլն), ու աստվածաշնչան արքետիպեր (դրախտ, մեռք, Ներբովք, Բարելոն, մահվան ստվեր և այլն), սակայն այդ ամենը այլևս չունի առասպելական կամ կրոնական բովանդակություն, ավելի ստույգ, այն արդեն իսկ որոշակիորեն փոխված է՝ ըստ բանաստեղծի գա-

ղափարագեղագիտական հայեցակերպի, քանի որ, ժամանակակից բանաստեղծին այդ միֆոլոգեմներն ու արքետիպերը հետաքրքրում են սուկ որպես խորհրդանիշեր, որոնք կարող են կիրառվել բանաստեղծական տեքստերում՝ դառնալով նոր ժամանակների գեղարվեստական տեքստերին բնորոշ լեզվաշերտերից մեկը: Այլ կերպ ասած, նշյալ միֆոլոգեմների և արքետիպերի մեջ ժամանակակից մարդը փնտրում է ոչ թե ծիսական, կրոնական կամ այլևայլ սյուժետային տարրեր, այլ իր զաղափարներին ու գեղագիտական ընկալումներին համապատասխան խորհրդանիշ-բառեր, ինչպես, օրինակ, հետևյալ ութնյակում:

“But droop not: Fortune at your time of life,  
Although a female moderately fickle,  
Will hardly leave you (as she’s not your wife)  
For any length of days in such a pickle.  
To strive, too, with our fate were such a strife  
As if the corn-sheaf should oppose the sickle:  
Men are the sport of circumstances, when  
The circumstances seem the sport of men. (V–XVII)

Բայց մի վիատվեք: Թեև Ֆորտունան  
Հավերժ փոփոխվող կին է քնքազին,  
Բայց ձեր տարիքում ձեզ չի լրի նա,  
Մանավանդ որ նա չի եղել ձեզ կին:  
Պետք չէ մեր բախտին հակառակ գնալ,  
Ի՞նչ կանի հասկը սուրսայր մանգաղին,  
Սարդը ուզում է խաղալ բախտի հետ,  
Բայց ինքն է բախտի խաղալիքն հավետ (V–17)

Հայերեն թարգմանությունում պահպանվել է «Ֆորտունա»-ն (երջանիկ դիպածի և հաջողության հռոմեական աստվածուհու լատիներեն անվանումը), որով այն «ամրագրվել» է հայերենի ընդհանուր բառապաշարում, դարձել շրջանառու բառ-եզրույթ՝ երբեմն գործածվելով իր պաշտամունքային մակդիր-մականունների հետ, ինչպես, օրինակ, «Ֆորտունա Պրիվատո» (ընտանիքի հովանավորութիվ), «Ֆորտունա Վիկտորիս» (հաղբանակի աստվածուհի, որով այն միաձուլվում է Վիկտորիայի հետ) և այլն (դիցարանական բառարան, 1985:264): Այս բառի «մուտքագրումով», հայերենը «քախտ» (fate) բառին զուգահեռ ունի «ֆորտունա»-ն (fortune), որը, սակայն, իր բովանդակային-իմաստային ընդգրկմամբ, զգալիորեն տարբերվում է «քախտ»-ից: **Fate-բախտ-ճակատազին** (destiny) և **fortune-բախտ-հաջողություն-երջանկություն-երջանիկ դիպված** հոմանիշային զույգը (նաև luck), անշուշտ, որոշակի ընդհանություն ունի (բախտ), սակայն, բոլոր հոմանիշների պես, նրանք ել ունեն իրենց իմաստային նրբերանգները (նաև օժտված են որոշակի հուզաւարտսահայտչական առնչանակությամբ): Մասնավորապես, *fate-բախտ-ճակատազիրը* էապես տարբերվում է *fortune-բախտ-հաջողություն-երջանկություն-երջանիկ դիպվածից*, այն առումով, որ այն շատ ավելի ընդհանուր իմաստա-բովանդակային ընդգրկում ունի, մինչդեռ վերջինիս (fortune) պարագայում, ի թիվս այլ իմաստների, առաջին պլան է մղվում հենց **երջանկություն**, **երջանիկ դիպվածի** զաղափարը, որը, համապատասխանաբար,

ընթերցողի մոտ մտազուգորդվում է մակդիրների իր «փնջի» հետ՝ «Վկասորիա», «Պրիվատա», «Դուքս», «Պլեբեյա», «Պատրիցիա», «Յեզարիս», «Ազուստա» և այլն:

Ինչ վերաբերում է «Դոն Շուանի» աստվածաշնչյան լեզվաշերտերին, ապա, առաջին հերթին, պետք է նշել այն միջողոգեմները (ավելի ստույգ, աստվածաշնչյան սակրալ-արքետիպային հասկացույթունները), որոնք արդեն շատ են հեռացել իրենց բուն առասպեկտական կամ աստվածաշնչյան արքետիպերից և հանդես են գալիս լեզվառնական, ժանրային, կառուցվածքային ու գաղափարագեղագիտական նոր իրավիճակում՝ ձեռք բերելով լեզվառնական նորանոր գործառույթներ: Բերենք մի քանի օրինակ.

The sun set, and up rose the yellow moon:  
The devil's in the moon for mischief; they  
Who call'd her CHASTE, methinks, began too  
Their nomenclature; there is not soon a day,  
The longest, not the twenty-first of June,  
Sees half the business in a wicked way  
On which three single hours of moonshine smile –  
And then she looks so modest all the while. (I-CXIII)

Դեղին լուսինը երկնքում շողաց,  
Նա սատանա է, փորձանը ու շարիք,  
Մարդկան գործում են կոպիտ մի սխալ  
Կոչելով նրան էակ մի բարի:  
Հազիվ գտնվի լուսատու մի այլ,  
Որ վկա լիներ այսրան մեղքերի,  
Քայլ նա երկնքում սահում է այնպես,  
Կարծես թե վնաս չի պատճառում մեզ:(I-113)

Այս ութնյակում, ինչպես տեսնում ենք, «նորանոր» գործառույթներով է օժտված լուսինը, որը «սատանա» է, նաև վկա՝ գիշերը գործվող «մեղքերի», և չնայած այդ ամենին, չքմեղաբար «սահում» է երկնքում, կարծես ամեն ինչից անտեղյակ: Սա այլևս այն արքետիպային «լուսինը» չէ, որի մասին Աստվածաշնչում ասվում է. «Աստված ստեղծեց երկու մեծ լուսատուներ. մեծ լուսատուն՝ ցերեկն իշխելու, իսկ փոքր լուսատուն՝ գիշերն իշխելու համար, ինչպես նաև աստղեր» (Ծննդ: 1:16):

Օկտավում լուսինը բնութագրվում է որպես «վկա մեղքերի»: Այն, թերևս, կարելի է դիտել որպես ալյուգիա՝ Շեքսպիրի Օքելոնի հետևյալ բառերին.

... o, insupportable! O heavy hour!  
Methinks it should be now a huge eclipse  
Of sun and moon, and that th' affrighted globe  
Should yawn at alteration.  
(W. Shakespeare - "Othello", Act V, scene II)  
Օ հ, անտանելի, օ հ, ոլքալի՝ ժամ...  
Կարծես թե հիմա արև ու լուսին պետք է խավարեն,  
Եվ երկրագունդը փոփոխությունից սովորաբ եղած՝

Բերանը բանա (ընդգծումը մերն է՝ Ե.Վ.):

(Վ. Շեքսպիր-«Օթելլո», արար 5-րդ, տեսարան 2-րդ, թրգմ. Հովհ. Մասեհյան)

Վերոնշյալ բայրոնյան լուսինը, միֆոլոգիկային «լուսին» (“moon”) բառի համեմատ, այնուամենայնիվ, իր հիմքում ունի արքետիպային «զիշերվա լուսատուն» և դրա հետ կապված դիցարանական ու աստվածաշնչյան ընթանումները, մասնավորապես, այն համոզումը, որ գոյություն ունեն լուսնի հետ կապված որոշ հոգեկան ու մարմնական հիվանդություններ ու շեղումներ: Հատկանշական է, օրինակ, նորկտակարանային հետևյալ դրվագը, ըստ որի, լուսնի հետ կապված հիվանդությունը՝ լուսնոտությունը, ոչ այլ ինչ է, քան դև. «Տէ ի, ողորմի ի իմ որդուն, որովհետեւ լուսնոտությունից է տառապում եւ չարաշար տանջում է...» (Մատթ.17:14), «Եւ Յիսուս նրան սաստեց, դեւը նրանից դուրս եկաւ, եւ մասուկը հենց այդ րոպեից բժշկուեց» (Մատթ.17:17):

Սեղբերվող ուրնյակը ուշագրավ է նաև նրանով, որ այստեղ «լուսինը», այսպես ասած, կրկնակի ալյուգիա է, այսինքն, ունի երկու արքետիպ. նախ՝ աստվածաշնչյանը, ապա՝ շեքսպիրյանը: Սակայն, այն երկուսից էլ տարբերվում է նրանով, որ առավելապես սիմվոլիկ նշանակություն ունի, քան խորհրդաբանական (միատիկ) - ինչպես Աստվածաշնչում, կամ հոգեբանական-ենթագիտական (ինչպես Շեքսպիրի «Օթելլոյում»):

Ո-ոմանտիզմի և նրա վառ ներկայացուցիչներից մեկի՝ Բայրոնի պոեզիայում, ընդհանրապես, միֆոլոգիկամեները և միֆոլոգիկային արտահայտությունները, առավելապես սուրյեկտիվ բնույթ ունեն: Ուստի, դրանք հաճախ ընկալվում են որպես իրենց արքետիպերից բավական հեռացած բանաստեղծական փոխակերպումներ («տրանսֆորմացիա»), որոնցում մեզ հետաքրքրում են նախ նմանատիպ բառերի և կայուն բառակապակցությունների իմաստային ու հնչերանգային բազմանշանակությունը, ապա նաև, լեզվանձական ու լեզվաբանաստեղծական արժեքների վերհանումը՝ բնագրային բարգմանական տարբերակների զուգադրմամբ: Այսպես, օրինակ, հետևյալ ութնյակում, «Նոյի արձակած սուրբ աղավնու պես» կայուն կապակցությունը, ըստ Էության, ալյուգիա-համեմատություն է Աստվածաշնչից (Ծննդ.8).

But to our tale: the Donna Inez sent  
Her son to Cadiz only to embark;  
To stay there had not answer'd her intent;  
But why? – we leave the reader in the dark –  
'Twas for a voyage that the young man was meant,  
As if a Spanish ship were Noah's ark,  
To wean him from the wickedness of earth,  
And send him like a dove of promise forth (II-VIII)  
Բայց վերադառնանք պատմությանը մեր:  
Ինեսն ուղարկեց Կադիս իր որդուն,  
Չուզեց, որ մնա նույնիսկ մի զիշեր,  
Իսկ ինչո՞ւ, ավա՞ղ, հայտնի էր ասսծուն:  
Նա նավով ալիսի ճանապարհորդեր,  
Գուցե մոռանար մեղք ու մոլություն,

Տուն վերադառնար՝ մաքուր, լուսագես,  
Նոյի արձակած սուրբ աղավնու պես:(II- 8)

Ակնհայտ է, որ բայրոնյան աղավնին տարբերվում է աստվածաշնչյան «աղավնուց». Եթե Աստվածաշնչում այն հասկացվում է առարկայորեն, որպես խևական աղավնի, ապա Բայրոնի մոտ «աղավնին» (dove) կիրառվում է այլարանորեն, որպես (like) պես նախըռով կազմված համեմատությունները, բայց դրանք տվյալ ութնյակի համատեքստում բոլորովին այլ դեր են կատարում: Այստեղ, նշյալ արքետիպերը ոչ թե իրենցիատուկ գործառույթն են իրականացնում, այլ հանդես են գալիս որպես հեղինակի բարոյագիտական հայեցակերպը արտահայտող լեզվաոճական «Փիզուրներ»: Այլ կերպ ասած, արքետիպը կորցնում է իր նախնական բովանդակությունը, քանի որ նվազում է (կամ խսպան վերանում) նրա սկզբնական նշանակությունը՝ ոնկալվելով որպես խորհրդանիշ: Արդյունքում, առաջնային է դառնում արքետիպի ձևական նշանակությունը, որի հետևանքով այն վերածվում է լեզվաոճական միջոցի: Դիցուք, արքետիպային աղավնին նշանակում է. ա) բոչուն, որին նավի պատուհանից բաց բողեց Նոյը, բ) Սուրբ Հոգու նշանակ, որպես նոր կյանքի խորհրդանիշ: Այսպիսով, ժամանակի ընթացքում, հնագույն արքետիպային կամ սակրալ նշանակություն ունեցող բառերն ու բառակապակցությունները, վերածվում են տվյալ դարաշրջանի գաղափարագեղագիտական պահանջներից բխող (և դրանց բավարարմանը միտված), լեզվաոճական միջոցներից: Ըստ այդմ, կարելի է եզրակացնել, որ լեզվի բառապաշտիք մի զգալի մասը կազմող բառերն ու կայուն բառակապակցությունները, իրենց գրային և հնչյունական կազմով նույնը լինելով հանդերձ, տարբեր տեքստային ու համատեքստային միջավայրում տարբեր են՝ թե՝ իմաստաբանական (սեմանտիկ), թե՝ նշանային և թե՝ վերնշանային գործառույթներով:

«Դոն Ժուանի» 5-րդ նվազի 21-րդ ութնյակում ունենք «երկինք», «ծիածան», «գույն» և «օձ» արքետիպերի բանաստեղծական փոխակերպումները.

“You take things coolly, sir”, said Juan. “Why”, -  
Replied the other, “what can a man do?”  
There still are many rainbows in your sky,  
But mine have vanish’d. All, when life is new,  
Commence with feelings warm, and prospects high;  
But time strips our illusions of their hue,  
And one by one in turn, some grand mistake  
Casts off its bright skin yearly like the snake(V-XXI)  
«Կյանքին նայում եք սառն ու անտարբեր,-  
Ասաց Ժուանը: – «Այլ կերպ չեմ կարող:  
Ձեր երկնքում կամ բյուր ծիածաններ,  
Իմ երկինքն արդեն չունի ոչ մի շող:  
Հույսի շողն է վառ՝ երբ ջահել ենք դեռ,  
Բայց օրերի հետ՝ հավերժ փոփոխվող,  
Փոխվում են գույներն այնքան շողշողուն,  
Այդպես օձն է իր շապիկը փոխում: (V-21)

Ուրնյակի տողացի թարգմանությունը ցույց է տալիս, որ որոշ անձտություններից, վրիպումներից և բնագրային շեղումներից զատ, թարգմանչին, ընդհանուր առմամբ, հաջողվել է տալ բայրոնյան բնագրի ճշգրիտ (համարժեք) թարգմանությունը: Մասնավորապես, 3-րդ բանասորում ունենք "There still are many rainbows in your sky" - «Ձեր երկնքում կան բյուր ծխածաններ» բանաստեղծական միֆոլոգիմը, որն աստվածաշնչյան արքետիպի՝ հաշտության ծխածանի ("I do set my bow in the cloud, and it shall be for a token of a covenant between me and the earth; and it shall come to pass, when I bring a cloud over the earth, that the bow shall be seen in the cloud; ...and the bow shall be in the cloud; and I will look upon it, that I may remember the everlasting covenant between God and every living creature of all flesh that is upon the earth", Genesis 9:13,14,16) հոգմակին է. («Իմ ծխածանը կը կապեմ ամպերի մեջ: Եվ դա թող լինի իմ ու ողջ երկրինիցի յախտենական ուխտի նշանը: Եթե երկրի վրայ ամպեր կուտակեմ, իմ ծխածանը թող երեւայ ամպերի մեջ: ...Թող իմ ծխածանը լինի ամպերի մեջ, որպէսզի ես տեսնեմ այն եւ յիշեմ իմ ու երկրի վրայ գտնուող բոլոր շնչաւոր էակների միջեւ իմ հաստատած յախտենական ուխտը»: Ծննդ. 9:13,14,16): Հենց այս հոգմակի թվով դրված «ծխածաններ» գոյականն է,որ իմաստային ու հուզական նոր երանգավորում է հաղորդում վաղնջական արքետիպին (ընդգծումները մերն են՝ Ե.Վ.):

Այս կապակցությամբ, հավելենք մի կարևոր լեզվանական միջոց՝ մեջբեռում (ավելի սոույզ, ալյուզիա-մեջբեռում):<sup>3</sup> Վերջինս, մեր կարծիքով, ալյուզիայի տարատեսակ է և վերլուծաբաններից շատերը հակված են այս առանձնացնել ալյուզիայից ու քննել որպես ինքնուրույն լեզվամշակութային երևոյթ: Ինչևէ. որքան էլ թարգմագան են այս երևոյթին առնչվող տեսական քնույթի դիտարկումներն ու եզրույթները (ալյուզիա, ռեմինիսցենցիա, մեջբեռում, ինտերտերստ, ուղղաձիգ համատեքստ, գլոբալ ուղղաձիգ համատեքստ, հեռում և այլն), այնուամենայնիվ, դրանք բոլորն եւ, վերջին հաշվով, ալյուզիա են, որն ինքնին ենթադրում է լեզվանական միջոցների ու երկի կառուցվածքի, ինչպես նաև հեղինակի գաղափարագեղագիտական հայեցակերպի սերտ միասնություն, այսինքն, հետազոտության լեզվաբանական և գրականագիտական տարրերի փոխներթափանցում և փոխսկապակցվածություն (Բինոգրած, 1963, Ենագով, 1980 և ուրիշներ): Դրանք (այդ մեջբեռումները), ևս, մտնում են լեզվանական ընդհանուր համակարգի (պոետիկա) մեջ, քանի որ մասնակցում են գրողի լեզվամտածողության դրսորմանը՝ ձևավորելով նրա լեզվական ինքնությունը, կամ, այսպես ասած, նրան բնորոշ առողջականությունը: Ուստի, նման մեջբեռումները ոչ միայն պետք է համարել ալյուզիա (ալյուզիա-մեջբեռում), այլև, որպես այդպիսին, ակտիվորեն ներգրավելով լեզվամտածողության «կայացմանը», նրանք ձեռք են բերում լեզվանական միավորի արժեք, որը, թերևս, կարելի է բնորոշել որպես ալյուզիային: Այդ մեջբեռումների բուն նպատակն է հասուն ընդգծել տվյալ ինֆորմացիայի իմաստն ու ներքին ուղղվածությունը, մասնակցել լեզվանական պարուի ու լեզվի պոետիկայի կայացմանը, և դրանով իսկ, տվյալ համատեքստի շրջանակներում լեզվանական նշանակության ձեռքբերմանը: Ասվածը վերաբերում է ոչ միայն կոնկրետ մեջբեռումներին, այլև ալյուզիային, ընդհանրապես, այդ թվում նաև, այսպես կոչված, «խառը» կամ երկվորմանի (հունա-հոռմետական և աստվածաշնչյան) ալյուզիաներին ու դրանց դեֆորմացիաներին:<sup>4</sup> Բերենք

«խառը», ալյուգիայի հատկանշական մի օրինակ, որտեղ նոյն ութնյակում ունենք և՝ հունա-հռոմեական, և աստվածաշնչյան ալյուգիաներ.

Lord Henry and his lady were the hosts;  
The party we have touch'd on were the guests!  
Their table was a board to tempt even ghosts  
To pass the Styx for more substantial feasts.  
I will not dwell upon ragouts or roasts,  
Albeit all human history attests  
That happiness for man – the hungry sinner!-  
Since Eve ate apples, much depends on dinner.(XIII-XCIX)

Ես չեմ կամենում Ամոնդիլների  
Ճոխ խնջույքները նկարագրել,  
Եվ Ստիրս գետի ուրվականների  
Ստամորսները նորից գրգռել:  
Քայց երջանկությունը մեր աշխարհի,-  
Այն օրից ի վեր (զիտեն բոլորն էլ),  
Ինչ Եվան քաղեց պտուղն արգելված,  
Ավա դ, առավել ճաշից է կախված: (13-99)

«Եվ Ստիրս գետի ուրվականների/Ստամորսները նորից գրգռել» բանատողերը ալյուգիա են հին հունական դիցարանությունից, ընդ որում, որոշակիորեն բանաստեղծական փոխակերպման ենթարկված կամ ձևափոխված, այն առումով, որ Ստիրս գետով անցնող մեռյալների հոգիները բանաստեղծը ներկայացնում է որպես ուրվականներ, որոնց ախտրժակը, նույնիսկ, «կզրկովեր» նման ճոխ սեղանից: Ութնյակի «Ինչ Եվան քաղեց պտուղն արգելված» բանատողը, ակնհայտորեն, աստվածաշնչյան ալյուգիա է(Ծննդ. 3:1-6):

Նշալ ալյուգիաներն ու դրանց դեֆորմացիաները լեզվառճական ու լեզվաբանաստեղծական մեթոդներով ուսումնասիրելիս «քախվում» ենք այնպիսի մի հիմնախնդրի, ինչպիսին է դարձվածքների դեֆորմացիաները (տե՛ս Ախմանով Կ.հ., 1969:166), երբ բառի բազմիմաստությամբ պայմանավորված, դարձվածքները ձեռք են բերում այլևայլ նրբիմաստներ: Այստեղ, անշուշտ, մեծ դեր է խաղում նաև համատեքստը, որը որոշակի իմաստային կամ հուզական երանգ է հաղորդում բառին: Պետք է,սակայն, հասուկ ընդգծել, որ այս իմաստա-բռվանդակային և հուզական երանգավորումները պայմանավորված են, նախևառաջ, բառ-համատեքստ փոխազդեցությամբ և փոխկապակցվածությամբ: (Լիտ- բին Փ.Ա., 2005:83):

Երբ խոսում ենք արքետիպային, և, ընդհանրապես, պատմամշակութային հենք ունեցող ալյուգիաների մասին, ապա այդ արքետիպային նշանակություն ունեցող ազգա-պատմա-լեզվամշակութային ոլորտի ցայտուն դրսերումների թվին պետք է դասել նաև դարձվածքները (տե՛ս Փրազեօլոգիա և կոնտեկստ- կուլտуրы, 1999):Այսպես, օրինակ,"...To turn her head with walzing and with flattery!" (XII-XXXII). «... Շողոմ խոսքերով գլխահան անել («Դոն Ժուան», 12- 32):

Ընդգծյալը պատկանում է հին ծագում ունեցող սովմատիկ (մարդու մարմ- նամասերի անվանումներով կազմված) դարձվածքների թվին: Ուշագրավ է, որ

այս տիպի դարձվածքները հաճախ ընդհանուր են թե՝ անզլերենում և թե՝ հայերենում: Այսպես, օրինակ, անզլերենի "turn smb.'s head" դարձվածը համարեք է հայերենի «գլխահան անել» դարձվածին (Կոնին Ա.Բ., 1984:371, Ա.Մ.Սուրբիայան, Ս.Ա.Գալստյան, 1975:141):

Այսպիսով, Բայրոնի «Դոն Շուան» պոեմի լեզվածական առանձնահատկությունները քննելիս, ի թիվս այլ միջոցների և դրանց բանաստեղծական փոխակերպումների ու դեֆորմացիաների, կիրառել ենք«այլուզիա-մեջթերում» բառեզրը՝ որպես տվյալ համատեքստում պատկերավորման կարևորագույն արտահայտչամիջոցի: Պետք է նաև նշել, որ մեր կարծիքով, շատ տարողունակ և բազմաշերտ «այլուզիա» հասկացության այս տարատեսակը («այլուզիա-մեջթերում»), նպատակ ունի առավել ընդգծել տվյալ ինֆորմացիայի իմաստն ու ներքին ուղղվածությունը, ընդհանրապես, ողջ ստեղծագործության պարուը, և խիստ բնորոշ է «Դոն Շուան» պոեմին՝ որպես կարևորագույն լեզվածական միջոցի:

### Ծանոթագրություններ

1. 1818-ի սեպտ. 17-ին իր ընկերներից մեկին՝ բանաստեղծ (հետազայում Բայրոնի կենսագիր) Թոմաս Մուրին հղած նամակում, Բայրոնը տեղեկացնում է, որ զրել է մի նոր պոեմ (առաջմ՝ 1-ին նվազը), որը «... կոչվում է «Դոն Շուան» և ծաղրելու է աշխարհում ամեն ինչ»: Նա կանխատեսում էր պոեմի հարուցած դժգոհությունների ալիքը. «Միայն թե վախենում եմ, որ այն, զոնե արդեն գրված մասը, չափից դուրս անպարկեշտ թվա մեր անշա փ պարկեշտ ժամանակների հանար» (Աֆոնինա Օ. Վերջարան // Բայրոն Զ. Գ. Դոն Շուան, Ե., Սովետական գրող, 1988, էջ 514):  
Բայրոնի կանխատեսում իրականանում է: Պոեմը, որը նա շարունակում էր զրել մինչև կյանքի վերջը (1824-ին, բանաստեղծի մահից առաջ, լույս են տեսնում պոեմի 15-րդ ու 16-րդ նվազները. իսկ մինչ այդ, 1818-1823թթ. արդեն հրատարակվել էին պոեմի 14 նվազները), հարուցում է պալատական պրետների, պետական, քաղաքական, կրոնական ու նշակութային գործիչների դժգոհությունը: «Լճային դպրոցի» բանաստեղծներից Ռոբերտ Սաութին, օրինակ, իր «Տեսիք դատաստանի» պոեմի առաջարանում, «Դոն Շուանի» 1-ին և 2-րդ նվազները բնութագրել է որպես «անաստվածության, սրբապղծութան ահավոր մի խառնուրդ», իսկ Բայրոնին ներկայացրել որպես Սովորի և Բելիալի սաղրած սատանայական դպրոցի պարագլուխ (նույն տեղում, էջ 526): Միաժամանակ, գերմանացի բանասեր-քննադատ, իդեալիստ Փիլիխուան և ոռմանտիզմի տեսաբան Ֆ. Շլեգելը (1772-1829 թթ.), որը Բայրոնի հետ հանդիպել էր 1816-ին, լրջորեն փորձում էր ապացուել, որ Բայրոնն անձամբ ծանոր է եղել սատանայի հետ (նույն տեղում, էջ 526):  
Սակայն, համընդհանուր քննադատության և մեղադրանքների մթնոլորտում, եղել են նաև անկեղծ գնահատանքի խոսքեր՝ Փ. Բ. Շելլի, Յո. Վ. Գյորեի և այլոց կողմից: Ինքը՝ Բայրոնը, նամակներից մեկում հատուկ նշել է «Դոն Շուան» պոեմի բուն նպատակը՝ ժամանակի հասարակական արատների նշավակումը:
2. Ութնյակը (լատ. octava) ութ տողից բաղկացած բանաստեղծական տուն է, որտեղ հանգավորվում են 1-ին, 3-րդ և 5-րդ, 2-րդ, 4-րդ և 6-րդ, ապա՝ 7-րդ և 8-րդ բանատողերը: Ստացվում է հետևյալ տաղաչափական պատկեր՝ abababcc: Սա բանաստեղծական ծն է, որը լայն տարածում ուներ Վերածննդի դարաշրջանի խորական գրականության մեջ: Ութնյակներով գրված

Զ.Գ.Բայրոնի «Դոն Շուանը», XIX դ. սկզբի եվրոպական պոեզիայի նշանակալի դրսնորումներից է: Ութնյակը հայ պոեզիայում հաջողությամբ կիրառել է Ե. Չարենցը («Մանկություն» պոեմը):

3. «Դոն Շուանում» առևա բազմաթիվ *այլուգիս-մեջրերումներից* բերենք հատկանշական մի քանի օրինակ. *“Sweets to the sweet”* (I like so much to quote;/You must excuse this extract, -' is where she,/ The Queen of Denmark, for Ophelia brought/ Flowers to the grave;) (II-XVII) - «Քաղցրերը՝ քաղցրին»:/Քաղվածքը բերելու կիրքս է կատաղի:- /Այս բառերն ասաց Դանիի թագուհին,/ Ասաց լալագին ու մի փունջ ծաղիկ /Գցեց իր հարսի շրեղ դագաղին: (2-17, էջ 70- մեջրերում Վ. Շեքսպիրի «Համետից» (արար V, տեսարան I): *“Whom the gods love die young,” was said of yore;* (IV-XII) - «Ում որ սիրում են աստվածները մեր, /Սեռնում են ջահեր»,-ասել է մի այր: (4-12, էջ 156- մեջրերում հոյն դրամատորգ Սենանդրոսից- մ.թ.ա. 343 թ.): *“There is a tide in the affairs of men...”* (VI-I)-«Մակրոնթագության պահեր են լինում /Մարդկանց գործերում...» (6-1, էջ 223- մեջրերում Շեքսպիրի «Հովին Կեսարից» (արար IV, տեսարան III) և այլն:
4. Այլուգիս-մեջրերման «դեֆորմացիայի» (ավելի սոույզ, «դեֆորմացված» այլուգիս-մեջրերման), ցայտուն օրինակ է «Դոն Շուանի» 6-րդ նվազի, 2-րդ ութնյակի հետևյալ բանատողը. “There is a tide in the affairs of women...”- «Մակրոնթագության պահեր են լինում / Կամանց գործերում...»: Ուշագրավ է, որ Շեքսպիրի «Հովին Կեսարից» վերցված վերը նշված մեջրերման այս ձևափոխությունը, ակնհայտորեն ունի որոշակի գործառությաին նպատակառություն՝ ընթերցողին նախապատրաստել հետագա սյուժետային զարգացումներին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստուածաշունչ, Մատեան Հին ԵՒ Նոր Կտակարանների, Մայր Աթոռ Սր. Եջմիածին ԵՒ Հայաստանի Աստուածաշախային ընկերութիւն, 2004:
2. Բայրոն Զ.Գ. Դոն Շուան (թրգմ.՝ Հ. Անան), Երևան, Սովետական գրող, 1988:
3. Բուտվիննիկ Մ.Ն., Կոզան Մ.Ա., Ռաբինովիչ Մ.Բ., Սելեցկի Բ.Պ. Դիցարանական բառարան, Երևան, Լույս, 1985:
4. Շեքսպիր Վ. Ընտիր երկեր, հ. 1-2, Երևան, Հայագետիքատ, 1964:
5. Սուքիասյան Ա.Մ., Գալստյան Ս.Ս. Հայոց լեզվի դարձվածարանական բառարան. Երևան, ԵՊՀ, 1975:
6. Ախմանովа О.С. Словарь лингвистических терминов. М.: Советская Энциклопедия, 1969.
7. Будагов Р.А. Что же такое лингвистическая поэтика? // Филологические науки, 1980.
8. Виноградов В.В. Стилистика. Теория поэтической речи. Поэтика. М.: АН СССР, 1963.
9. Кунин А.В. Англо-русский фразеологический словарь. М.: Русский язык, 1984.
10. Литвин Ф. А. Многозначность слова в языке и речи. М., Комкнига, 2005.
11. Фразеология в контексте культуры /отв. ред. В.Н. Телия/. М.: Языки русской культуры, 1999.
12. The Complete Works of Lord Byron. Paris, Baudry, 1835.
13. The Holy Bible. Authorized King James Version. N. Y., 1989.
14. The Macmillan Shakespeare-Hamlet. Macmillan Education, 1978.
15. The Macmillan Shakespeare-Julius Caesar. Macmillan Education, 1977.
16. William Shakespeare. Othello. Penguin Books, 2001.

**Е. ВАРДАНЯН – Лингвостилистические особенности поэмы Дж. Г. Байрона “Дон-Жуан” в переводе на армянский язык.** – Как в поэзии Байрона вообще, так и в “Дон Жуане”, есть многочисленные мифологемы и библейские архетипы, которые с течением времени подверглись семантическим изменениям и стали определенными лингвостилистическими средствами. В этой связи, вводится понятие “аллюзия-цитата”, как присущее поэме “Дон Жуан” важнейшее лингвостилистическое средство, а также его, так называемые, “деформации”. На достаточно убедительных примерах в статье подробно рассматриваются такие случаи. Особое внимание уделяется армянскому переводу. Соответственно выявляются отклонения от оригинала и порой предлагается свой (авторский) вариант перевода.

**Ключевые слова:** языковой слой, лингвостилистический, архетип, функция, мифологема, символ, трансформация, деформация, аллюзия, цитата

**Y. VARDANYAN – “Linguostylistic peculiarities of the poem “Don Juan” by G.G.Byron in Armenian translation”.** – In the poetry of Lord Byron in general and in “Don Juan” in particular, there are numerous Greco-Roman mythologemes and biblical archetypes, which in time have undergone semantic changes and have become various linguostylistic devices. In this connection, the notion of “allusion-citation” is introduced (as well as its so-called “deformations”) as a most important linguostylistic device and so typical of “Don Juan”. Thus, the present article touches upon analysis of such cases, thereby adducing ample examples. Due attention is paid to the Armenian translation. Accordingly, deviations from the original are analyzed separately and sometimes the author’s own version is suggested.

**Key words:** language layer, linguostylistic, mythologeme, archetype, function, symbol, allusion, citation, transformation, deformation